

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ



1875 — 1975

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

(Ծննդն 100-ԱՄՅՆԱԿԻ ԱՌԹԻՎ)

Բաճախիւր. գիտ. գովառու Ս. Ն. ՍԱՐԻՆՅԱՆ

Երբ 1897 թ. լույս տեսավ Իսահակյանի «Երգեր և վերքեր» գիրքը, հայ քնարերգությունը գրական հերթափոխություն չէր սպասում: Պոեզիայի նոր ուղղությունը տասնամյակ առաջ ազդարարել էր Հ. Հովհաննիսյանը, իսկ Հ. Թումանյանը էպիկական հանձարով կշռում էր ժողովրդի հազարամյա հոգևոր հարստությունը: Իսահակյանը ցույց տվեց, թե ինչ արժե անհատականության ներքին էներգիան բանաստեղծության գեղարվեստական հնարավորությունների բացահայտման տեսակետից: Նա կառուցեց փիլիսոփայական մի համապարփակ աշխարհ, հայ քնարերգությունը նաև բարձրացրեց համաշխարհային շափանիշների: Եվ միանգամայն հատկանշական են Ալ. Լյուկի այն խոսքերը, թե՛ «բանաստեղծ Իսահակյանը առաջնակարգ է. թերևս ազգպիսի թարմ ու անմիջական տաղանդ այժմ ամբողջ եվրոպայում չկա»¹:

Ավետիք Իսահակյանը ծնվել է 1875 թ. Ալեքսանդրապոլում (Հենինական): Նախնական կրթություն ստանալով ծխական և վանական դպրոցներում, 1889 թ. ընդունվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը և ավարտում 1892 թ.: 1893 թ. մեկնում է Գերմանիա և ընդունվում Հայպցիգի համալսարանը, որպես ազատ ունկնդիր: Այստեղ նա ուսումնասիրում է գերմանական կլասիկ և նորագույն, ինչպես և հին արևելքի փիլիսոփայությունը, ծանոթանում ժամանակի սոցիալիստական ուսմունքներին, կարգում համաշխարհային գրականության դասականներին: 1895 թ. Իսահակյանը վերադառնում է հայրենիք: Կարճ ժամանակ անց նա բանտարկվում է, ապա արսորվում Օդեսա՝ հակացարական տրամադրություններ ունենալու մեղադրանքով: Հետագա տասնամյակներին բանաստեղծի կյանքն ընթանում է արտասահմանյան գեգերումների մեջ՝ Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Հունաստան: Ականատես լինելով աշխարհի անցուդարձերին, նա ամենուրեք նշմարում է բռնություն, շահագործում, տառապանք: «Տեսա,— գրում է Իսահակյանը,— որ միայն հայր չի տառապում, բովանդակ աշխարհը լաց ու կոծի մեջ է. բոլոր ժողովուրդները լծի տակ են առնված, ուժեղը լափում է թույլին, ամենուրեք բռնակալություններ, ճնշումներ, արյունահեղ պատերազմներ բնաբաղց պետությունների մի-

¹ А. Л. Блок, Сочинения в двух томах, т. 2, М., 1955, էջ 703:

ջև, և պոզրոմներ (ջարդեր) և, վերջապես, ամենուրեք ֆեոդալիզմի կամ կապիտալիզմի ծանրագին լուծեր, շահագործում, հարստահարություն...»²։

Իսահակյանը բանաստեղծություններ սկսել է գրել դեռևս Բևորգյան ճեմարանում ուսանելու տարիներին։ Առաջին նախափորձերն արդեն ցույց էին տալիս, որ նա հետևում էր պոեզիայի այն նոր ուղղությանը, որ Թումանյանն անվանում էր արևելահայ քնարերգության «երկրորդ շրջան»։ «Երբ հնչեց Շ. Հովհաննիսյանի քնարը,— վերհիշում է Ավ. Իսահակյանը,— մեր պատանեկան աշխարհը շշմեց, զուխը կորցրեց. ահա նախադասներ և Շահազիզը միասին, ավելի մեծ քանակով ու ավելի բարձր որակով։ Նրա պոեզիայի զարնանային թարմությունը, բնականությունը, մարդկայնականը, նրա նոր, չքնաղ պատկերները, հիանալի լեզուն, սրտաբուխ երգը հայուցինացիայի մեջ ձգեցին մեզ»³։

Իսահակյանի «Երգեր և վերքեր» գիրքը իսկական հայտնություն էր, և քննադատությունը հավաստեց, որ հայ գրականության մեջ մուտք է գործում հարուստ կարողություններով օժտված ու ինքնատիպ մի բանաստեղծ։

Չաված սիրտս երգեր հյուսեց,
Երգեց անուշ ու տխուր,
Վիշապ հալվեց, արցունք հոսեց,
Վեհաւ, ինչպես թիւժ աղբյուր։

Հավերի պես երգերս րօտեմ,
Հովերի ճեւտ զնազիւն,
Արցունքներս ցոգեր դառան,
Վարդի ծոցում շողացին։

Հովերն եկան, շիրմիս վրա
Տխուր երգեր երգեցին,—
Ահ, իմ անուշ, իմ վաղուցվա
Հյուսած երգերս երգեցին...


Երևույթների այսպիսի բնկալումը հայտաբերում է բանաստեղծության գեղարվեստական նոր նշանակություն։ Օբյեկտի և սուբյեկտի շփոխորդված կապը բանաստեղծությանը հաղորդում է «ստարերային անմիջականություն» (Տերյան), զգացմունքի լիություն և տրամադրության ավարտվածություն։ Դրանք զգայուն հոգու արձագանքներ են, մերթ որպես սիրո թրթիռ, մերթ՝ կարոտի պնդում, մերթ՝ «դարի հիվանդության» հուսաբեկ հառաչանք, որոնք իսահակյանական քնարերգության մեջ արտահայտություն են գտնում երգային մաքուր ձևերի մեջ, ամբողջ բանաստեղծության բովանդակությունը տեղագրելով վեցից մինչև քսան տողերի սահմաններում։

Իսահակյանի բանաստեղծության պոետիկական համակարգը ի հայտ է բերում հայկական անտունիների, պանդխտության երգերի և հայրենիների պարզությունն ու զինամիկան, հասկացությունների մեծությունն ու փիլիսոփայական հագեցվածությունը։

Իսահակյանի անհատականությունը նախապես կրեց «ճեղքված աշխարհի» ահագին ցավը։ «Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ, իմ մեջ երկինքն է

² Ա. Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 169։

³ Ա. Վ. Իսահակյան, Երկեր, հատ. 4, Երևան, 1959, էջ 55—56։



երգում».—այս առանցքի վրա բանաստեղծը քննեց մարդկության ճակատագրի սուղեղծվածը և փորձեց կռահել շեղումը՝ աշխարհի հավերժական շարժումներում: Արդեն ամենավաղ շրջանի բանաստեղծական տողերում սրտնոր Երկրային ցավի մորմորն էր կարողում խամրող աստղերի տխուր հայացքում.

Անհուն երեքից. աստղի՛կ լուսավայլ,
Եւր դու տեսնում ես մեր ոչնչություն,
Եւկրային կյանքի խավարն ու մրույլ,
Անմեղ գոհերի հառաչն ու արյուն.—
Նսեմանում է հայացքդ փայլուն,
Ճնշում է և՛ քեզ յախիժ դառնագին.
Գու աղորում ես և լուռ արտասվում.
— Օ՛. նախանձում եմ ես քո արցունքին:

Բանաստեղծի հոգում ծանրանում է անարդար աշխարհի տխուր հառաչանքը, ուր ստրուկները տվալտում են թշվառության մեջ, իսկ տերերը՝ հագնում վայելքից, ուր սրտերն են խամրում մերժված սիրուց, իսկ երազները՝ ցնդում օրերի մղձավանջում: Ունկնդիր այս ամենին, բանաստեղծը թախիժով է լցնում ողջ տիեզերքը, «ախի» ու «վախի» հառաչանքը սիմվոլացնում որսիս մարդկության վշտի բանաստեղծական արձագանք՝ «Ա՛խ, ինձ համար քուն չկա», «Ա՛խ իմ սիրտըս՝ խեղձ, վշտահար», «Ա՛խ, քո տեսքին, անուշ լեզվին կարոտցել եմ, մայրիկ ջան», «Ա՛խ, էս շատ վատ երազ է», «Ա՛խ, շատ սրտանց կարոտցեր եմ», «Ա՛խ, ո՛ւր կերվա իմ սև ճամփեն», «Ա՛խ, ափսոս, իմ գարուն կյանքիս սուր փշերը մնացին», «Ա՛խ, իմ ճամփես մոլոր դնաց», «Վա՛խ, իմ սերս անցավ գնաց», «Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ-ցավ», «Ա՛խ, աշխարհը տուն է սրգի» և այլն: Խռոված հոգին հանգիստ է որոնում, թախանձում երկրային ու երկնային վկաներին ամոքել իր կսկիծը, սակայն լսում է միայն տխուր հառաչի արձագանքը և օրօր մրմնջում իր վշտերին՝ զեթ քնի մեջ որոնելու հոգու անդորրը.

Դիչերն եկավ. աստղերն ելան,
Լուսնակն անուշ ցոլցրլաց.
Մաղկունքն ամեն նո՛ւր քուն մտան
Ամպի ցողով. լուսնի շողով
Հարհանդ-մարմանդ քուն մտան:
Գուք է՛լ քեզ, ոսկի աստղեր.
Վարդ ու բլրո՛ւլ քուն եղե՛ք.
Օրոր-ծովե՛ր, շորոր-հովե՛ր,
Անո՛ւշ-անո՛ւշ քուն եղե՛ք:
— Իմ սար-դարդե՛ր. իմ ծով-ցավե՛ր.
Գուք էլ մո՛ւշ-մո՛ւշ քուն եղե՛ք:

Բանաստեղծը հիվանդ է «երկնքի ցավով» և նրա «անհուն վշտերն ու տանջված մտքերը... տիեզերքի հսկա վերքերի ցավն ու կսկիծն են», ուրեմն՝ իդուր է վերադարձի թախանձանքը: Անհայտ, անորոշ հղերքներ է տենչում նա, «հեռավոր ափերի» ոսկե հովիտը, որ կա և չկա, ուր աստղերը խորհրդավոր հեքիաթներ են պատմում, բնությունը դարերի ավանդությունն է խրչում և «վճիտ ու զվարթ լալուրի մեջ» ցոլանում է երազ աշխարհի հրաշքը.

Այնտեղ երդեցի խոհես անհուն,
Ու աստղերի պես շալ էի տալիս
Հեռու ափերում...

Այդ դարի բուռն իրադարձությունները, հեղափոխական-ազատագրական շարժումներն ու դավափարական հոսանքների բաղձազանդությունը յուրովի արձայանք էին գտնում Իսահակյանի բանաստեղծական աշխարհում: «Ազատության զանգ» բանաստեղծության մեջ Իսահակյանը արդեն լսում է մարդկության արթնացումի ղողանջը: «Տիեզերական զանգի» տեսիլքը տեղի է տալիս ազատության ու պայքարի իրական կանչին և բանաստեղծը ժողովուրդների «րմբոստացման և բուռն ցասման բարբառով» ավետում է սուրբ եղբայրության տոները, փառաբանում «ազատության և իրավունքի» ահեղ գոտեմարտը.

Անհուն վրեժի և ասելույթան
Պատգամն եմ վառում ես ձեր սրտերում.
Եվ ձեզ ասում եմ՝ ո՛վ դու ցնցոտի.
Դո՛ւ, որ թշվառ ես, անտուն, անօրի.
Դո՛ւ որ քո ձեռքին կռել ես շղթա.
Դո՛ւ, որ քո ձեռքից՝ դառն ծովացած
Նզովք ես շինել, և լուծ քո վրա —
Իս քո ժանիքը սրում եմ հիմա:
Կանգնեցնում եմ բազուկդ ահա,
Ինչպես ռիակալ օձն անապատի.
Եվ քո քաղցած բրուկն ցնում հիմա
Ես սուրն եմ դնում ահեղ նրշմաբախ:

Սակայն վրեժի և րմբոստացման այս տրամադրությունները արմատական բեկում չենշանալուրեցին Իսահակյանի աշխարհայեցողության մեջ: Իր հայացքներով ու համակրություններով ղեմոկրատ բանաստեղծը վերահաս ուսակցիայի պայմաններում անձնատուր եղավ խոր հիասթափության: Վրա է հասնում հոգեկան ղեզերումների ամենադրամատիկ շրջանը: Բանաստեղծը վերադարձնում է հասարակությանից հիասթափված անհատի ներքին դրաման, հոգեկան ճգնաժամի տառապալիքն ջղաձգումներով: Երես դարձնելով գոհարկ կրքերից հոշոտվող իրականությունից, Իսահակյանը իր կորած հույսերի կրքերից է լալիս, մերթ Ժառս լինում «տիեզերական անարդարության» դեմ, մերթ խաղաղում իր հոգին ներվանայի երանավետ հեքիաթում, մերթ անեծք տեղադրված աշխարհի վրա, փախչում դեպի անապատների անորոշ հեռուն.

Ո՛չ իշխանություն, ո՛չ կոխի, ո՛չ կլին
Ձեռն հափշտակում հիվանդ իմ հոգին:
Ղողանջն է միայն ձիգ քաղաքի
Հեռավոր, անհայտ նախապառնների
Հրապույրներով դյուրում իմ հոգին
Թափառումների անշուք անմեկին...

Միայնության և հիասթափության թախիծը Իսահակյանի պոեզիայում շփանդեց մեկանխույժ վերադարձումների: Նրանում ավելի շատ ողմանտիկական ընդվզում կար, քան վիսրուն հոգու սենտիմենտալ հեկեկանք, ավելի շուտ ուժեղ անհատի խռովք, քան համակերպության քարուղ: Սա մի արտակարգ ուժ և ողմանտիկական մեծություն էր տալիս Իսահակյանի բանաստեղծական անհատականությանը: Թող որ տառապանքը համատարած լինի և աշխարհում լինի՝ կորսված, թող որ ունայն լինեն մարդն ու յուր ձգտումը, բայց կա կյանքը, կա բնության հավիտենական նորոգումը, կա մի աներևույթ իմաս-

տուիթյուն, որով լցված է տիեզերքը, կա ստեղծումի հանձարը, որ հրաշակե-
լուում է հոգու և մտքի արժեքները: Եվ կյանքի անսկիզբ ու անվերջ հոսքի մեջ
բանաստեղծը բացասման ու հաստատման, պատճառի ու հետևանքի մշտա-
հոլով խորհուրդն է կարդում աշխարհի հավերժության հերթաթում:

Գետակի սրա
Քեմվել Լ ուրիմ
Ու նալում Լ լուռ
Վագոդ շրեմիմ:

... Երազ աշխարհում
Լմեն բան հավետ
Գալիս Լ. զնում
Ու ցնդում անհետ:

Եվ զլուխը կախ՝
Նա լաց Լ լինում.—
Ջրերը ուրախ՝
Գալիս են, զնում...

Աշխարհի այսպիսի բազմանշանակ ընկալումը Իսահակյանի բանաստեղ-
ծական հետաքրքրությունները դուրս է բերում սահմանափակ ներանձնացու-
մից դեպի կյանքի լայն հորիզոններ: Որքան էլ բանաստեղծը ապավինում է
«անդարձ հուշերի» և «երազ հովիտների» պատրանքին, այնուամենայնիվ հա-
զարավոր թելերով կապվում է «հրաշք աշխարհի» հետ, իր հոգեղեն ու նյու-
թեղեն գոյությունը զգում է բնության շարժումները, և որքան էլ անհատա-
պաշտական խռովքը նրան տանում է դեպի անապատների միայնությունն ու
մոռացումի անմարդ ավերքը, այնուամենայնիվ իր հոգու թելերով նա կապված
է մնում հայրենի եղերքին:

Իմ սիրտն այնտեղ Լ. ուր աստեղամեծ
Լեռներն են կանգնել հագստ կոտ գրան,
Ուր եղջերուն է ոստնում բերձից բերձ.
Լեռնիվը ճախրում վիհերի վրա:

Իմ սիրտն այնտեղ Լ. ուր ճախնիք մեռ
Կերտել են շֆեղ կոքողներ հավերժ.
Ուր ժողովուրդը վսեմ վեղը մեռ
Պատմում է դարձյալ հավատով անշեջ:

Մա՛յր իմ ժողովուրդ. դեպի բեզ կը գամ,
Կո գամ դեպի բեզ, հայրենի՝ աշխարհ.
Ինչ որ վեհ ունիմ, սիրով ձեզ կը տամ.
Եվ սիրտս, կյանքս միայն ձեզ համար:

Իսահակյանի բանաստեղծական աշխարհը ի հայտ է բերում երևույթների
մի զարմանալի բարդ համադրություն: Մի կողմից մարդու օտարում, մյուս
կողմից մարդկային ամենասուրբ զգացմունքների՝ մայրական կարոտի, սիրո
քաբախումների, սրտի ամենազգայուն թրթիռների հուզաթաթավ ջերմություն.
մի կողմից փախուստ դեպի անապատ, մյուս կողմից հայրենի հող ու ջրի
պաշտամունք. մի կողմից սիմվոլիզմի պոետիկական կառուցվածքի խստու-
թյուն, մյուս կողմից ժողովրդական մոտիվների անպաճույճ պարզություն.
Արտաքրուստ հակասական ու իրարամերձ բեկումները, սակայն, Իսահակյանի
ստեղծագործական աշխարհի անբացատրելի պարագոքաները շեն, այլ նրա
Յ Լանդես. № 3

մտածողության փիլիսոփայական և գեղարվեստական սինկրետիզմը: Իսահակյանի պոեզիայի տիպարանական այս յուրահատկությունը առավել ցայտուն արտահայտություն է գտել «Աբու-լալա Մահարի» (1909) և «Ալագյալի մանիներ» (1895—1917) պոեմներում: Առաջին հայացքից նույնիսկ դժվար է բոլորովին անհամասեռ գրական այս երևույթները համատեղել ստեղծագործական մի անհատականության խառնվածքին: Սակայն հենց այդ սինթեզի ունջ է Իսահակյանը:

«Աբու-լալա Մահարի» պոեմը արտահայտում է անհատի վախուստը հասարակությունից, հոգու ազատագրումը երկրային, առօրեական կրքերի կապանքներից: «Ուզում էի փախչել արշունով ներկված մոլորակից, հեռանալ ժամանակից, տարածությունից, տիեզերքից»,— այսպես է Իսահակյանը բնութագրում այն տրամադրությունները, որոնք դարձան պոեմը գրելու շարժառիթը¹: Պոեմի գաղափարը Իսահակյանը դիտում է որպես մարդու հոգեկան ունակության յուրօրինակ սուբստանցիա:

«Աբու-լալա Մահարի» պոեմը խոհական-փիլիսոփայական կառուցվածք ունի և նրա սյուժեն ընթացք է ստանում հերոսի խորհրդածությունների մեջ: Աբու-լալա Մահարին՝ Բաղդադի հուշակավոր բանաստեղծը, տասնյակ տարիներ ապրեց խալիֆաների հոյակապ քաղաքում, ապրեց փառքի ու վայելքի մեջ, եղավ օտար աշխարհներում, գիտեց մարդկանց և օրենքները, ճանաչեց մարդուն, խորապես ատեց նրան և որովհետև շունը կաշկանդող ոչ մի բան, մի գիշեր թողեց քաղաքը և իր քարավանով հեռացավ դեպի անապատ:

Եվ այսպես, ծայր է առնում խռոված հոգու զրույցը իր քարավանի հետ: Եւ քննում է «աշխարհի բանը», բարոյական դատաստանի ենթարկում այն ամենը, ինչ թողել էր ետևում և ինչը նա համարում էր պատիժ ու անարգված: Մերժման կիրքն առավել մաղձոտ է դառնում, երբ մարդկանց արարքները չափում է հեքիաթ-աշխարհի և տիեզերական արարչության վսեմ խորհրդով: Խժուժում էր, թե մարդիկ ունենդիր կլինեին անսկիզբ, անվերջ և միշտ նորոգվող հրաշք հեքիաթին և իրենց գոյությունը կիմաստավորեին հավերժականի գեղեցկությամբ, այնինչ մի անհասկանալի նախատիքով գերի են դարձել նյութական մղումների և սական կրքին:

Կյանքը երազ է, աշխարհը՝ հեքիաթ, ազգեր, սերունդներ՝ անցնող փառվան
Ու հեքիաթի մեջ. վառ երազի հետ, չվում է անտես դեպի գերեզման:
Կույր ու գուլ մարդիկ, առանց երազի, առանց լսելու հեքիաթն այս վսեմ,
Իրար կոկորդից պատառ եմ հանում և զարձնում աշխարհն՝ ահավոր չեհեհեմ:
Ձեր օրենքները—լուծ ու խաբազան, և անելի մի ցանց խոլական սարդի,
Եվ որոնց ծառուղի լուծավորում եմ երգը բլրովի, անուշը վարդի:
Սղկելի՜ մարդիկ. վառի կրդառնան ձեր վառ սրտերը, ձեր գործերը չար,
Եվ ժամանակի ձեռքը անտարբեր կտրե-կավիլե պիղծ հետքեր ձեր:
Եվ ունայնաշունչ հողմը կրշաչե ձեր ոսկորների փառերի վրա,
Իսկ վայելելու դուր միշտ ապիկար՝ երազն այս չեհաղ, հեքիաթն այս ոսկյա:

Չարությունը անիծված հասարակությունը ոչ մի սուրբ գաղափար չի թողել: Խիղճն ու բանականությունը հիմար ցնորք են, իրականը միայն մոլի կիրքն է և հոշոտելու վայրենի բնազդը: Բարեկամը չար է և նախանձ, ընկերը՝ մատնիչ ու դավաճան, սերը՝ պիղծ է ու վաճառված, բարոյականությունը՝ շինծու և

¹ «Սովետական գրականություն», 1972, № 9:

ասպականված: Եվ ի՞նչ է փառքը՝ սնոտի և երերուն պատրանք, այսօր՝ վեհաշուք, վաղը՝ առաթուր. ի՞նչ է պատիվը՝ ոսկու երկրպագություն: Ի՞նչ է գանձը՝ բյուրավորներից բամաժ արյուն և որբի արցունքներ, որով հիմարները սեր ու հանճար են տիրում. ի՞նչ է ամբոխը՝ բնազդական կրքերի անսանձ տարերք. ինչ է համայնքը՝ գերության բանակ, ուր տրոհվում է անհատը և խլանում հոգու թռիչքն ու մտքի սլացումը: Մաղձոտ հոգին ատում է նաև հայրենիքը, «ցուփ հարուստների այդ պերճ արտավայրը, ուր հողը արյունոտ է», իսկ «անդուլ հերկողը շոր քար է կրծում իր հացի հանդեպ»: Նա մերժում է օրենքն ու իրավունքը՝ «բիրտ ուժեղների այդ սուրբ զաժան», որ միշտ կախվում է անդորի զլխին և պաշտպան կանգնում հողորին: Նա նզովում է ամբողջ աշխարհը, որ հանցանքներով է ծանրանում և պարարտանում ասպականությամբ.

նզովում եմ ձեզ, հեռավա՛ր մարդիկ, ձեռ չառն ու բաբին, կրոնները ձեռ,
Ուրեմ միմիայն չգրա եմ կտում և ստեկուրյան կոփում զնղաներ:
Ապիրատ աշխարհ, ուր հզոր ոսկին դարձնում է զոդին ազնիվ, բարեհույս,
Ազուշին՝ հանճար, վախկոտին՝ կտրին, աղեղին՝ շֆնաղ և պոռնիկին՝ կույս:
Լմաղկային աշխարհ, առյան բաղանի՛ւ, ուր թույլն՝ հանցավոր և հզորն՝ արդար,
Ուր մարդը տխեղծ, ինչ որ ասում է այս զարչ աշխարհում՝ սոսկ նյութի համար:

Կտրելով իր հոգու բոլոր կապերը հասարակությունից, երկրային կյանքի նյութական գոյությունից, այն ամենից, ինչ մանր է, շնչին ու կաշկանդող, Աբու Մահարին իր սկեպտիցիզմը դուրս է բերում գեպի տիեզերական անհունը, ուր աստղերն ու արեք հավերժության խորհուրդն են հուշում և հոգիներն են սուզվում անսահմանության ազատ հեռուներում: Պոեմը ավարտվում է Աբու-լալայի և արևի հանդիպումով: Եվ այստեղ է, որ իմաստուն սկեպտիկը կատարում է իր փիլիսոփայական հայտնությունը.

Նալամ Բեզ, առև՛, շյուբը բյուրաբյուր, դու աստծուց հզոր, դու կյանքի աղբյուր,
Դու, իմ անմահ մայր, մայրական դու գիւղ, դու միակ բաբի, դու միակ սուրբ, սուրբ:
Տիեզերական դու բաժակ անհուն՝ ոսկի արեքման և երանության,
Դու հեմվանքի, հրապույրների հեղեն զինու դու անհուն օվկիան:
... Տիեզերական հազարամանդեա դու մեծ խախնանք, բաբի՛ արեղակ,
Ահա իմ փոփն—մի ծառավ բողբոջ, թափի՛ր նրա մեջ զինիդ անապակ:
Զո երջանկությամբ, Էո իմաստությամբ, Էո հավերժությամբ հաբեցրո՛ւ ինձ,
Տո՛ւր ինձ անցյալի անգարդ մոռացում, լույս անուշներում Էո բուրումնալից:
... Պո վսեմությամբ հաբեցրու ինձ, հաբեցրու ինձ լույս-հիացնեով,
Խավառների դեմ աննադր ախոյան, զարուհների մայր, ուրախության ձով:

Ամբողջ պոեմի փիլիսոփայական խոհերում առկա է դարասկզբի անհատապաշտական աշխարհայեցողության ազդեցությունը: Ե՛վ աշխարհի նորոգության, և՛ տիրող իրավակադրի կրքոտ ժխտման, և՛ կամքի բացարձակ ազատության, և՛ արևի հայտնության վերաբերյալ խորհրդածություններում, և՛ նրա քննադատության ու հիասթափության մեջ կտր հումանիզմ և գեղեցիկի բուռն երազանք:

«Աբու-լալա Մահարի» պոեմը բանաստեղծական մի շքեղ հյուսվածք է՝ փիլիսոփայական խորունկ վերլուծություններով, պատկերների ճոխությամբ, բառապաշարի հարստությամբ, ներքին դինամիզմով և լիրիկական հագեցվածությամբ: Այն թարգմանվել է բազմաթիվ լեզուներով և ստացել համաշխարհային ճանաչում:

Ոճի և կառուցվածքի ակադեմիզմը, որն ի հայտ է բերում աղերսները սիմվոլիզմի պոետիկային, տեղի են տալիս այլ աշխարհընկալումների, երբ իսահականը դիմորոշվում է դեպի հայրենի բնաշխարհն ու ժողովրդական կյանքը: Այս տեսակետից «Ալազյազի մանիներ» պոեմը դեղագիտական այլ սկզբունքից է ելնում, քան «Աբու-լալա Մահարին»: Իր կառուցվածքով պոեմը չի հանձնառում սյուժետային մի որոշակի ընթացք, մարդկանց ու ճակատագրերի բախում և հանգույցների լուծում: Ըստ էության դա ինքնուրույն և ավարտված բանաստեղծություններից կազմված մի յուրատեսակ հյուսվածք է, որը, սակայն, ամբողջանում է որպես էպիկական դրվագ՝ իրականի ու հեքիաթայինի ուրույն երանգներով: Այստեղ իրականությունը չի կոնկրետանում «սոցիալական ժամանակի և տարածության մեջ» (Հունաշարսկի): Դա ժողովրդի հազարամյա կեցության լիրո-էպիկական ասքն է: Պոեմն սկսվում է հայոց լեռնաշխարհը գովերգող լիրիկական հիմներով: Սակայն դրանք սոսկ պեյզաժի արտաքին նկարադրություններ չեն, այլ յուրատեսակ փիլիսոփայական խոհեր, որոնք հնչում են որպես դարերից եկող և դեպի դարերը զնացող հեքիաթ աշխարհի նախերգանքը:

Է՛յ Մանրաշի երագ-նովի՛տ,
'Էո՛ւն, զմրուխտե օրորո՞ց,
Ծաղիկներդ լուսափրիք՝
Վրաս մեռախ—վառ ծածկոց:

Աղբյուրներդ՝ բլուրեղ զանգեր,
Հովերդ անուշ կր բերեն,
Սոռացումի քսվիչ երգեր,
Հովերդ անուշ կօրորեն:

Հուր-հավերդ՝ քներն արծաթ,
Կտուցներ՝ լալ-մարջան,
Ինձ կը պատմեն ոսկի ճեփաք՝
Աշխարհներեն դյուրական:

Նախերգանքին հաջորդող երգերի մեջ հյուսվում է «ոսկի հեքիաթը»՝ ժողովրդի կյանքը՝ պարզ ու գեղեցիկ, մաքուր ու բնական: Բնաշխարհի հովվերգական էկզոտիկայում ժողովուրդը իր կյանքի հեքիաթն է հյուսում, իմաստավորում լեզենդներ, կշռում շարն ու բարին, երազում հրաշքը, կերտում սիրո և գեղեցկության առասպելը: Երգիչ-աշուղը պատմում է զրույցը հրաշք-աղջկա ողբերգական սիրո մասին, ապա խաղաղ քուն է բերում սիրո մի այլ հեքիաթ, ուր իշխանազնը երջանկություն է որոնում եղևիկ-աղջկա մենավոր խրճիթում և կյանքը շարունակում է այդ հեքիաթը ջահելների տոնախմբությամբ և չքնաղ Զարոյի սիրո ու երջանկության խաչտանքներով: «Սիրո հեքիաթը վերջ չունի», և հավիտենական գեղեցիկ ու անվերջ այդ հեքիաթի մեջ իսահականը արտահայտել է ժողովրդի էպիկական մեծության ու հավերժության գաղափարը:

1917 թ. Իսահականը գրում է «Սասմա Մհեր» վիպերգը: Դա «Սասունցի Դավիթ» էպոսի գեղարվեստական մշակման դասական օրինակներից մեկն է հայ գրականության մեջ: Ընտրելով էպոսի շորրորդ ճյուղը, Իսահականը ուրույն մեկնաբանություն է տվել փոքր Մհերին, նրա մեջ խտացնելով

ժողովրդի սոցիալական երազանքները: Ականատես լինելով կյանքի շարիքներին, Մհերը ծառայում է աշխարհի անարդարության դեմ և փորձում պայքարել հանուն ճշմարտության, սակայն շարության անեծքը հաղթում է նրան: Երկիրն այլևս անկարող է դառնում տանելու նրա ծանրությունը և համոզվելով, որ աշխարհը մատնված է շարության, իսկ արդարությունն արսուրված է հավիտենապես, նա փակվում է ժայռի մեջ:

Նրկիրն էլ չէր ուզի տանի
 Մհերին,
 Արեգակն էլ՝ աչքի նման
 Մեռելին
 Պալ կրճայեր ու լույս չէր տա
 Մհերին:
 Ձիու ոտքը ծունկերն ի վեր
 Հողերու մեջ կը մխրճվեր.
 Ուժով-զոռով զնայ Մհեր,
 Եկավ հասավ վաճառ ծովուն:
 Ազոավու Քար բացվեց մեկն,
 Առավ-կալավ մեջ իր ծոցին
 Մհերն ու Ձին:
 Ազոավու Քար զոցվեց նորեն
 Նրբա վրեն:

1937 թ. Իսահակյանը նորից անդրադարձավ «Սասմա Մհեր» պոեմին: Առանձին շտկումներից բացի գրողը գրեց նաև պոեմի վերջերգը, ուր Հոկտեմբերյան հեղափոխության սիմվոլիկ պատկերի մեջ ցույց տվեց ժողովրդի ըմբոստացումը շարության դեմ և հերոսի վերադարձը: «Երբ բռնկվեց Հոկտեմբերյան սոցիալիստական աշխարհացունց հեղափոխությունը,— գրում է Իսահակյանը,— ես տեսա, որ Մհերի ազատության ժամը հնչեց: Մհերը՝ հայ ժողովուրդը փշրեց իր շղթաները ռուսական մեծ պրոլետարիատի հետ և դուրս եկավ ստրկության խավար բանտից»: Իսահակյանը հիանալի է պահպանում ոճի գեղարվեստական միասնությունը, գաղափարական լուծումը բխեցնելով էպոսի ներքին տրամաբանությունից և հետևելով ժողովրդական պատումի ոգուն ու ոխին:

Ճորտ ու քստրուկ. բանվոր. մշակ.
 Մով կապեցին Մհերի շուրջ.
 Մով կապեցին փոքրեկաշունչ.
 Գրոհ տվին բոլոր մեկտեղ՝
 Արհանձնու, իշխաններու,
 Սեպուհներու, ավատներու,
 Հարուստներու վրա մեկտեղ.
 Ավերեցին աշխարհը շար.
 Ու ռամկոյություն բերին աշխարհ.
 Ռամկի օրենք ու իրավունք.
 Ու տեղ դառնա ռամիկն իրեն
 Սուր վաստակին. արդար հացին:

1910-ական թթ. Իսահակյանը ստեղծագործական հատուկ նախասիրություն է հանդես բերում դեպի լեզենդի և բալլադի ժանրը: Պատմության դրամատիկ այդ ժամանակաշրջանում հումանիստ բանաստեղծը իր հայացքն

ուղղում է ղեկի մարդկության անցյալը, հայկական և այլ ժողովուրդների ավանդությունների սյուժեներով ստեղծում ղեկավարվածության հիանալի էջեր, որոնք հաստատում են դարերի կենսափորձով իմաստնացած հոգևոր արժեքների հավիտենական ճշմարտությունը: Ծթե «Հավերժական սերը» (1914), «Լեյլի ու Մեջլում» (1910), «Ասպետի սերը» (1917) լեզենդներում զովերգվում է սիրո վեհությունն ու ղեկեցկությունը, ապա «Մեր նախահայրերը» (1916), «Ժողովրդի քնարը» (1917), «Հայրենի հողը» (1920) լեզենդներում հաստատվում է ժողովրդի հոգևոր արժեքների հավերժության պատմափիլիսոփայությունը:

Ավ. Իսահակյանի ստեղծագործության մի արժեքավոր բաժինն է կազմում ղեկավարվածության արձակը: Պատմվածքներ, արձակ պոեմներ, հեքիաթներ, լեզենդներ ու գրույցներ, վերջապես «Ուստա Կարո» անավարտ վեպը, — ժանրային ձևերի այսպիսի բազմազանությամբ է ամբողջանում Իսահակյանի արձակը: Գեղարվեստական կառուցվածքով Իսահակյանական արձակը փիլիսոփայական բնույթ ունի: Գրողը դործ ունի համապատմական կատեգորիաների հետ, որոնք զաղափարական լուծում են գտնում փիլիսոփայական բնահանրացումների մեջ:

Պատմվածքների զլխավոր թեման լծորդվում է ժողովրդի ազատագրական զաղափարի հետ: Իսահակյանի հերոսը ժողովրդի մարդն է, ազգի և հայրենիքի ճակատագրով ապրող, հայրենի հողի ու օջախի իմաստությունը կրող մարդը: Վրացի Շաքրո Վալիաշվիլին («Շաքրո Վալիաշվիլի»), իտալացի Զիովանին («Գարիբալդիականը»), քուրդ Ամոն («Քուրդ Ամոն»), ադրբեջանցի Բայրամ Ալին («Բայրամ Ալին»), վիկինգ Բուդին («Վիկինգների կյանքից»), հայազգի Օհան-ամին («Համբերության չիբուխը»), պարսիկ Զաֆարը («Զիլի Սուլթանի երգը»), բասկ Գոնսալոն («Գերնիկայի նվիրական նոգին») նույն խոհերով, նույն պայմաններով ապրող մարդիկ են: Նրանք խորապես վերապրում են իրենց ժողովրդի ճակատագիրը, փայլալույսում նույն երազները, պայքարում արդարության և ազատության համար:

Արձակ պոեմներում, լեզենդներում և գրույցներում Իսահակյանը կառուցում է փիլիսոփայական մի աշխարհ, խորհրդածում բնության առեղծվածների մասին, կյանքի իմաստը քննում մարդկության հոգևոր արժեքների հազարամյա փորձի մեջ: Հին, փիլիսոփա արևելքի մարդիկ խորհրդածել են կյանքի առեղծվածի ու զոյության իմաստի մասին, որոնք ճշմարտությունը: Իսահակյանը լսում է դարերի ձայնը և ավանդական իմաստությունների մեջ ստուգում իր ժամանակի ճշմարտությունը: Դարաշրջանի կատաստրոֆիկ իրադարձությունների հանդեպ գրողը մարդկության դարերի փորձից հանում է իմաստնացած ավանդներ և կառուցում աշխարհը կայուն և հաստատուն մեծությունների վրա: Հեքիաթային ու հրաշագեղ մի հեռավոր աշխարհում հնչում է անհայտ և անանուն մի երգ, որն իր կախարհական հրապույրով շարժում է բնությունը, դյուրում մարդկանց: Պատմվում է գրույցը և հետևորդներին ավանդում իմաստության պատգամը. «Մի՞թե այս անանուն երգը բանաստեղծությունը չէ՞՝ նվիրական սերը ղեպի մարդը, երկիրը, աստղերը: Մարդկային հողու և տիեզերքի միաձուլումը: Բանաստեղծությունը, ուր հողին տիեզերանում է, և տիեզերքը՝ հողիանում» («Սիրո երգը»):

Ժամանակի ու տարածության անսահմանության մեջ հոգիները խոստովանում են իրենց սերը, վերապրում անջատումի, մահվան կսկիծը և ձուլ-

վում հավերժությունը. «Մի՞թե դու շղիտես, որ այս է մեր անվախճանելի ճակատագիրը—անջատում և միացում, միացում և անջատում, ախպես անհամար անգամ, որովհետև մեր սերը ինքնին հավերժությունն է, որ եղել է միշտ, որ կա և կլինի միշտ...

Մահը մեզ համար ժամանակավոր նիրհ է եղել և հանգիստ միայն, երբեմն փափագ՝ անջատվելու տանջալից, անդաշն վիճակներից...

Եվ դարերից հետո վերստին մեր շրթունքները անհուն երանությամբ հավեցին իրար, և մեր հոգիները անսկիզբ և անվախճան համբույրի մեջ վերստին միացան իրար, և մեր հայացքները վերստին հավեցին իրարու մեջ...» («Հավերժություն»):

Կյանքը, տիեզերքը հավիտենական շարժման ու նորոգումի մեջ է քննում Իսահակյանը իր լեզենդներում ու զրույցներում: Մարդու «գոյության ակունքարթի վրա և բոլոր իրերի զահավեթ հոսման վրա» Շիդհարը դառնագին խորհում է աշխարհի ունայնությունը («Շիդհարը»): «Ինչի՞ և ինչո՞ւ» առեղծվածի անքննելիությունը իր մահով է լուծում Բողոքիսանը («Շի-Հոանդ-Տի Բողոքիսանը»), մահվան հանդեպ բանականության հաղթանակն է ազդարարում Անանդան («Անանդան և մահը»), իր իմաստությամբ աստվածներին է ընկճում Օմար Խայամը («Օմար Խայամի վեճը աստծու հետ»), իսկ երազային Լիլիթը մարդու էությունից պոկված գեղեցկության ձգտումն է, որ մնում է հավիտենապես անհաս: Ամենուրեք գրողը տիեզերքի կառուցվածքի մեջ կարողում է բանականության հրաշքը, իրերի մեջ որոնում մի գերազույն ձրգտում դեպի գեղեցիկն ու կատարյալը:

Աշխարհայացքային հակասական ու բարդ անցումներով Իսահակյանը հասավ սոցիալիզմի գաղափարին: «Ինչո՞ւ չեմ տարվել,— գրել է նա,— ի՞նչ փիլիսոփայական, էթիկական, հասարակագիտական սխտեմներով... Եղել եմ տոլստոյական, նիցշեական, Գերմանիայում ուսանող ժամանակս՝ սոցիալ-դեմոկրատ: Հուսահատված՝ դարձել եմ անիշխանական, արեսիմիստ: Տարվել եմ Բուդդայով: Ոգևորվել եմ հայկական մարտական ազգայնությամբ... Ըմբոստացել եմ կապիտալիզմի դեմ, հասարակության դեմ, ամեն ինչի դեմ: Եվ վերջ ի վերջո, երկար խորհելուց, կշռելուց, դատելուց հետո վերստին եկել կանգնել եմ սոցիալիզմի վրա... Այդ փրկության լաստի վրա: Եվ ահա՝ ազատ կամքով, այրելով բոլոր նավերը, անվերադարձ վերստին եկել եմ այն աշխարհը, ուր մեծ, հոյակապ գործ է կատարվում՝ ազգային և համամարդկային իմաստով»⁵:

1926 թ. Իսահակյանը այցելում է Սովետական Հայաստան: Դեռևս 1917 թ. օտար հեռուներում համակրանքով ընդունելով Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, նա հայրենիքում ականատես է լինում իր ժողովրդի կյանքի վերելքին և խոր հավատ տածում դեպի նրա սոցիալիստական վերածնունդը: Արդեն կողմնորոշված դեպի սովետական կարգերը, նա մեկնում է Փարիզ և 1936-ին առմիշտ վերադառնում Երևան: Սկսվում է գրական հասարակական գործունեության մի նոր ու արգասավոր շրջան:

1940—1950-ական թթ. Իսահակյանի ստեղծագործության մեջ մեծ տեղ է գրավում դրական-քննադատական ակնարկը: Նրա հողվածները Պուշկինի, Լերմոնտովի, Զեյնովի, Գորկու, Շեքսպիրի, Նիզամու, Ռուսթավելու և հա-

⁵ Ա. փ. Իսահակյան, Երկեր, հատ. 4, էջ 390—391:

մաշխարհային դրականության այլ դասակարգումների մասին աչքի են ընկնում գիտական խորությամբ և բացառիկ արժեք են ներկայացնում հայ և համաշխարհային գրական առնչությունները լուսաբանելու տեսակետից:

Գրական մի հարուստ հանրագիտարան է կազմում Իսահակյանի «Իմ հուշերից» գիրքը, ուր գրողը դիմանկարային ձևի մեջ տալիս է հայ գրականության և մշակույթի անվանի գործիչների (Ղ. Աղայան, Պ. Պոռչյան, Մուրացան, Նոր-Դոս, Հ. Թումանյան, Հ. Հովհաննիսյան, Վ. Տերյան, Ալ. Սպենդիարով, Կոմիտաս, Թ. Թորամանյան, Հ. Հակոբյան և ուրիշներ) դիպուկ, խոր և ընդհանրացված բնութագիրը:

Իրականացված սոցիալիզմի երկիրը Իսահակյանին ներկայանում էր որպես «մեր ժամանակվա մեծագույն մարդու՝ Լենինի» ֆաղափարների հաղթանակը: Իսահակյանը մեծ հարգանք և խորին ակնածանք է տածել Լենինի հանդեպ, բնութագրել նրան որպես հանճարեղ մտածող ու հեղափոխական, որը իր «հրեղեն պատգամներով» հեղաշրջեց աշխարհը և ազդարարեց ազգերի ու մարդկության պատմության լուսավոր դարաշրջանը:

Ֆաղափարական այս հավատով Իսահակյանը մոտեք գործեց սովետական բաղամազ գրականության մեջ և դարձավ նրա հեղինակավոր դեմքերից մեկը: Նրա ստեղծագործական եռանդը վառ արտահայտություն գտավ Հայրենական պատերազմի տարիներին: Պատերազմի առաջին օրերին նա գրեց «Խաղմակոչ» բանաստեղծությունը, որով պատգամ էր տալիս հայ ժողովրդին՝ Լենինու ֆաշիզմի դեմ և պաշտպանելու սուրբ հայրենին:

Մերիկի նման զարկեցե՛ք շեփուր,
Ինչի ուզմի դաշտ, դեպ հերոսացում,
Ինչի ուզմի դաշտ, սուրբ դուռի տակ
Ինչի բարձունք մահի ու փառքի,
Վաճեցե՛ք հեռու քչնամուն վայրագ,
Մեր խրեքներից, մեր հեծաններից,
Մեր արտ ու կայից վաճեցե՛ք հեռու:
Հավերժ պիտ մնա հայրենիք մեր,
Հզոր և ազատ և հավերժ կանգուն
Մեր խղեպների սուրբ սրկի տակ:

Մեծ արձագանք են գտնում պատերազմի ու ֆաշիզմի դեմ Իսահակյանի հրապարակախոսական ելույթները: «Մա՞զ գերմանական օկուպանտներին», «Անդրկովկասի ժողովուրդների եղբայրությունը անսասանելի է», «Հաղթանակը պրոգրեսի կողմն է», «Հայրենական պատերազմը և հայ ժողովուրդը» և այլ հոդվածներում գրողը մերկացնում է ֆաշիզմի հակամարդկային էությունը, վեհացնում սովետական հայրենասիրությունն ու սոցիալիզմի ֆաղափարը:

Իսկ երբ վերջացավ Հայրենական պատերազմը, Իսահակյանը գրեց «Մեծ հաղթանակի օրը» հուղաթափավ բանաստեղծությունը, որը մի իսկական հումանիստական հիմն է՝ մարդու բարոյական վեհության:

Մեր սուրբ փառով դրեցինք պատյան,—
Մեծ հաղթանակի օրն է ցնծալից,
Պատվեց մահաշունչ ոսկյա դաժան,
Երգեր են հոսում զվարթ սրտերից:

Հոծ փողոցներում աղմուկ ու շառաշ,
Հոսում են մարդիկ ծափով, ծիծաղով,
Մի մարդ սեղան է բացել տան սուռչ,
Լցրել բասերը ոսկեփայլ գինով:

Սվ անցորդներին կանում է խնդում.—
Նղբայրեն՛ք, որդուս կենացը խմե՛նք.
Հերոս է որդիս, հաղթեց թշնամուն.
Ձեր որդիների կենացն էլ խմենք:

Խմում են խինդով. ցնծում երջանիկ.
Նվ զարկում նորից զավարներն իրար.
Նրանց մեջ մի հայր ասում է մեղմիկ.—
Է՛ս էլ իմ որդուս հանգստյան համար:

Գլխարկներն իսկույն հանում են նրանք.
Խոր ակնածանքով լռում են մի պահ.
Խմում են անծայն զոհվածի համար
Նվ հեղում գինին սուրբ հացի վրա:

Իսահակյան-հրապարակախոսի գրիչը ակտիվ էր գործում նաև հետպատերազմյան տարիներին: Սովետական ժողովրդի համաշխարհային-պատմական հաղթանակը և աշխարհի բաժանումը երկու լագերների սրեց իմպերիալիզմի ռեակցիոն-գաղափարական արշավը սոցիալիզմի դեմ: Իսահակյան-հրապարակախոսը նորից իր գիրքերի վրա էր: Իր ելույթներում նա դատապարտում է «սառը պատերազմի» քաղաքականությունը և իր ձայնը միացնում խաղաղության ու հումանիզմի համաշխարհային շարժմանը:

Համաժողովրդական հռչակի արժանացած գրողը ակտիվ մասնակցություն է ունենում գրական և հասարակական կյանքին, ղեկավարում Հայաստանի սովետահայ գրողների միությունը, որպես նրա նախագահ (1946—1957): Իսահակյանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ էր, Սովետական Միության պետական մրցանակի դափնեկիր: Սովետական գրականությանը մատուցած ծառայությունների համար նա պարգևատրվել է Լենինի երկու շքանշանով:

АВЕТИК ИСААКЯН

(К 100-летию со дня рождения)

Доктор филол. наук С. Н. САРНИЯН

(Резюме)

Вступив на литературную арену как один из крупных представителей так называемого «второго поколения» армянской поэзии нового времени, Аветик Исаакян своим ярким талантом открыл новую страницу в армянской художественной литературе. Синкретизм мышления в творчестве Исаакяна сочетался, с одной стороны, с формой армянской народной лирики, с другой — стилевыми поисками мировой поэзии. На широком диапазоне времени и пространства Исаакян построил целый

философский мир, соотносил судьбы личности и человечества с вечностью и безграничностью вселенной; он тоже поднял армянское художественное слово на уровень мировых критериев. Мятая, беспокойная, ищущая личность Исаакяна отражала путь дореволюционной армянской демократической интеллигенции, его бурный протест против буржуазного общества, его душевный кризис в сфере сложных и противоречивых событий начала века, его стремление к истине и справедливости, к идеям социализма. Проникнутые философским раздумьем, гражданским пафосом и гуманизмом произведения Исаакяна, как неповторимые художественные ценности, вошли в сокровищницу армянской и мировой литературы.